

Երիտասարդական 4-րդ գիտաժողովի (28-30 նոյեմբերի, 2018) նյութերից

ԽԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ՆՈՐ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԲԱՌԱՐԱՆ»-Ի ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՉԱՆԴԱՅՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նվիրվում է Վենետիկում Մխիթարյան միաբանության հիմնադրման 300
և «Բազմավէպ» հանդեսի հիմնադրման 175 ամյակներին

«Նորայրի գրչէն ամէն բառ, ամէն տող թանկագին է
հայ բանասիրութեան համար»

Ներսես Ակինյան

Բանալի բառեր՝ հայոց լեզվի պատմություն, բառարան, պատմական բառագի-
տություն, գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայերեն:

ԺԹ. դարավերջի և Ի. դարասկզբի հայ բառարանագրության և աղ-
բյուրագիտության երևելի դեմքերից է Նորայր Բյուզանդացին, իսկական անու-
նը և ազգանունը՝ Ստեփանոս Գազեզյան-Ճիզմեճյան-Թերզյան, ծնվել է 1845 թ.
Պոլսում: 21 տարեկանում հայր Հարություն անվամբ ձեռնադրվել է Մխիթար-
յան միաբան, եղել է Մխիթարյան մատենադարանի ավանդապահ և «Բազմա-
վէպ» հանդեսի տեսուչ, ուսուցչություն է արել միաբանության Մուրադ Ռափա-
յելյան վարժարանում: 1870-ական թթ. հեռացվել է Մխիթարյան միաբանու-

թյունից, ընդունել է Նորայր անունը (իբրև «նոր այր», Նորայր Ն. Բիւզանդացի, ֆրանսերեն՝ *Néandre de Byzance Norayr*), որից հետո մշտապես հանդես է եկել Նորայր Բյուզանդացի անվամբ¹:

Դժբախտաբար, նրա անձը, առավել ևս գործերը ինչպես իր ժամանակ, այնպես էլ այսօր, մեր խորին համոզմամբ, գնահատված չեն ըստ արժանավույն, մինչդեռ լեզվագիտական և աղբյուրագիտական նրա տարբեր ուսումնասիրությունների թեկուզ և հպանցիկ գիտարկումը ակնհայտ է դարձնում, որ Բյուզանդացուն իրավամբ կարելի է համարել հայ բառարանագրության կենտրոնական դեմքերից և պատմական բառագիտության լավագույն գիտակներից մեկը: Ն. Բյուզանդացու գիտական վաստակի արժեքուման և նրա աշխատությունների մի մասի մշակման ու հրատարակության գործում անուրանալի ավանդ ունեցած Մարտիրոս Մինասյանը ճիշտ է նկատել, որ իր գիտական գործունեությամբ Բյուզանդացին «կանխել է իր ժամանակը, գերազանցել շատերին, որոնք ոչ միայն չեն հասկացել ու գնահատել նրան ու գրածները, չեն նպաստել հրատարակութեան, այլև չեն սպառել անձնական զոհողութեամբ լոյս ընծայածները, նրան դառնացրել ու հալածել են»²: Մ. Մինասյանի այս խոսքերը ծնունդ են առել Բյուզանդացու մի քանի տասնյակ նամակների ազդեցությամբ, որոնցում մեծ բանասերն ու բառագետը հաճախ է դժգոհել իր գործերի նկատմամբ եղած անտարբերությունից: 1886 թ. հունիսի 22-ի թվակիր նամակում, որ պահվում է Մաշտոցյան Մատենադարանի արխիվում, Բյուզանդացին գրում է. «Գործ կայ, գործող չկայ, – ըսաւ ոմն երբեմն: Ես ալ կ'ըսեմ՝ գործ կայ, բայց գործէ հասկցող չկայ...: Դառնութեամբ կը լցուիմ մտածելով, թէ ո՛րչափ օգտակար կրնայի ըլլալ իմ ազգիս, եւ ընդհակառակն ո՛րչափ անօգուտ եմ»³:

Անտարակույս, այս հոգեվիճակն իր ազդեցությունն է թողել Ն. Բյուզան-

¹ Բյուզանդացու կենսագրությանը, նրա գործունեությանը և մատենագիտությանը մանրամասն կարելի է ծանոթանալ հետևյալ հոդվածներում՝ Ն. Ակիմեան, «Կենսագրական. Նորայր Ն. Բիւզանդացի», ՀԱ, 1921, 1-2, էջ 85-96, Ա. Ա. Աբրահամյան, «Նորայր Բյուզանդացու կյանքն ու գիտական գործունեությունը», ՊԲՀ, 1965, 3, էջ 19-34, Մ. Մնասեան, «Նորայր Բիւզանդացու կեանքը, հրատարակութիւնների եւ դիւանի ցանկը», Բազմավէպ, 1983, Ա-Դ., էջ 39-97: Պատմաբան-հնագետ Խաչատուր (Քուչուկ) Հովհաննիսյանին ուղղված նամակներից մեկում Բյուզանդացին շատ սեղմ գրում է իր կենսագրության կարևոր տարեթվերն ու իր հրատարակությունները, տես Ռ. Ղազարյան, Ա. Տեր-Ստեփանյան, «Նորայր Բյուզանդացու անտիպ նամակներից», ՊԲՀ, 1974, 3, էջ 238-239:

² Մ. Մինասեան, նշվ. աշխ., էջ 39:

³ ՄՄ արխիվ, Նորայր Բյուզանդացու ֆոնդ, թղթապանակ 8¹⁻¹⁹⁷, նմկ 8¹⁷:

դացու գիտական արժեքավոր աշխատանքների հրատարակութչյան վրա: Այս բացասական երևույթի արձագանքը գտնում ենք նաև մեծանուն երգիծաբան Հ. Պարոնյանի «Հոսհոսի ձեռատետրը» գործում. «22 Յունիս. կիրակի. Պ. Նորայր Բիւզանդացի միշտ կ'աշխատի իւր Գաղղիարէն-Հայերէն բառարանին որ մեծ առաւելութիւններ ունի իւր նախորդներու վրայ: Ահա մարդ՝ որուն ամեն քաջալերութիւն արժանի է. ահա գործ՝ որուն ամեն բարի ընդունելութիւն կը վայլէ: Տասը հարուստ վաճառական այսօր միանալով ընկերութիւն մի կազմեցին՝ Նորայրի Բառարանին մէկ բաժանորդ գրվելու համար...»⁴: Պարոնյանը հարուստներին ուղղված իր հեգնանքում նկատի ունի Բյուզանդացու սովորածավալ և աղբյուրների վկայություններով հարուստ Գաղղիերեն-Հայերեն բառարանը, որի պահանջարկը շատ ցածր է եղել, և 1000-ից ավելի օրինակ այդպես էլ չի վաճառվել⁵:

Պետք է նշել, որ բանասերն իր կենդանութչյան օրոք կարողացել է լույս ընծայել ընդամենը երեք գիրք⁶, մի քանի արժեքավոր հոդված և «Քննասէր» պարբերականի երկու համար, մինչդեռ նրա բառարանագրական, սրբագրական և աղբյուրագիտական վիթխարի ժառանգությունը տարիներ շարունակ մնացել է թղթերի վրա՝ տեղափոխվելով գրադարանից գրադարան: Բյուզանդացու մահվանից վեց տարի անց՝ 1921 թ., «Հանդէս ամսօրեայ»-ում մեծ բանասերի մասին Ն. Ակինյանը գրել է. «Նորայրի արժանիքն ոչ ըստ արժանույն գնահատած պիտի ըլլանք, եթէ դատենք զայն տպագրութեամբ ծանօթ երկասիրութիւններէն միայն: Անոր կարեւորագոյն աշխատութիւնները անտիպ մնա-

⁴ **3. 3. Պարոնեան**, Հոսհոսի ձեռատետրը, Պտոյս մը Պօլսոյ թաղերու մէջ, Խիկարի գուշակօրինմ, Թիֆլիս, 1892, էջ 35:

⁵ **Մ. Մինասեան**, նշվ. աշխ., էջ 46: Այդ ֆանակով օրինակների գոյության և ընդհանրապես, Բյուզանդացու արխիվի գտնվելու վայրի մասին առաջին անգամ տեղեկանում ենք Սուրեն Երզնկյանի (Ս. Լորելի) մի նամակից՝ ուղարկված եգիպտահայ թեմի առաջնորդ Մ. արք. Սիրունյանին: Նամակը լույս է տեսել «Էջմիածին» հանդեսում, տե՛ս **Ս. Երզնկյան (Ս. Լորելի)**, «Նորայր Բյուզանդացու անտիպ գրական ժառանգությունը», էջմիածին, 1949, Գ-Գ., էջ 64-68:

⁶ Հայկական բառաքննութիւն. ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց եւ նշանակութեան բառից ինչ, գրեաց **Ն. Ն. Բիւզանդացի**, Կ. Պոլիս, 1880, Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, հետետողութեամբ եմիլ կիզրէի եւ գաղղիական ակադիմիայ, յօրինեաց **Ն. Ն. Բիւզանդացի**, Կ. Պոլիս, 1884, Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք. Գիրք մակարայեցոց, եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս եւ Փաւստոս Բիւզանդ, հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք եւ լուսաբանութեամբք, գրեաց **Ն. Ն. Բիւզանդացի**, Տիֆլիս, 1900:

ցած են...: Հայ բանասիրութիւնը յաւէտ պիտի ողբայ անցելոյն սխալը. բայց պիտի շարունակէ յարութիւն տալ գործչի մը, որպիսի էր Նորայր...: Նորայրի գրչէն ամէն բառ, ամէն տող թանկագին է հայ բանասիրութեան համար»⁷:

Տարիներ անց Բյուզանդացու արխիվով հետաքրքրվել, ըստ հնարավորի այն համակարգել և մասնակի հրատարակել է Մ. Մինասյանը: Հենց նրա շնորհակալ աշխատանքի շնորհիվ է, որ բանասիրության առավել լայն շրջանակներին հայտնի դարձան Բյուզանդացու մի շարք արժեքավոր ուսումնասիրութիւններ և բառարանագրական հուշարձաններ, այդ թվում՝ «Նախնիք»-ը⁸, «Բառգիրք ստորին հայերէնի»-ն⁹, Նոր հայկազյան բառարանի խմբագրած և սրբագրած տարբերակը, մի շարք հոդվածներ¹⁰ և այլն:

Բյուզանդացու նամակների քննությունը ցույց է տալիս, որ բառագիտական աշխատանքները և բառարանագրությունը նրան զբաղեցրել են բավական վաղ հասակից: Գաղղիերեն-հայերեն բառարանի առաջաբանում գրում է, որ երիտասարդութեան 14 տարիներն (1866-1879 թթ.) է նվիրել այն կազմելու համար¹¹: Հ. Ղ. Հովնանյանին հասցեագրած նամակներից մեկում էլ նշում է, որ 1864 թ. Ս. Ղազարի վարժարանում ուսանելու շրջանում միտք է հղացել ստորին հայերենի բառարան կազմելու. «...ի 1864 տարույ մինչդեռ Ս. Ղազարու վարժարանին էի, — գրում է Բյուզանդացին, — փափաք ծնաւ յիս ժողովելոյ զամենայն գրութիւնս ԺԲ-ԺԷ. դարուց (Բժշկարանք, Ախտարք, Երագականք, Ոսկեփորիկք, Թուղթք և այլն), և յօրինեցայ բառգիրս ստորին հայերէնի»¹²:

Նկատենք, սակայն, որ Բյուզանդացուն զբաղեցրել է ոչ միայն ստորին հայերենի բառաշխարհը: Նամակներից պարզվում է, որ նա միտք է ունեցել կազմելու հին հայերենի, արդի հայերենի, հայերեն-ֆրանսերեն նոր բառարաններ. «Այժմ կզբաղեմ Հայերէն բառարանաւ և Հայերէն-գաղղիերէն բառարանաւ: Կ'ուզէի այս երկու բառգիրքներն ալ ընդարձակագոյն յօրինել, քան

⁷ Ն. Ակիմեան, *Նշվ. աշխ.*, էջ 93 և 96:

⁸ Ն. Ն. Բիւզանդացի, *Նախնիք, հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը*, Ժնև, 1996:

⁹ Ն. Ն. Բիւզանդացի, *Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ. դարուց*, հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը, Ժնև, 2000:

¹⁰ Ն. Ն. Բիւզանդացի, *Ուսումնասիրութիւններ. բնագրեր, բառարանագրութիւն, հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը*, Ժնև, 2003: Այս հրատարակութեանը, ըստ էության, ժողովածու է, որում ամփոփված են նաև այնպիսի հոդվածներ, որոնք Մ. Մինասյանի ճշգրտմամբ լույս են տեսել ավելի վաղ գիտական պարբերականներում:

¹¹ Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Յառաջաբան, էջ 2.:

¹² Նշվ. ֆոնդ. թղթ. 9¹⁻¹⁹⁵, նմկ 9¹⁹.

զԳաղղիերէն-հայերէնն», – գրում է 1886 թ. հունիսի 22-ի մի նամակում¹³: Բյուզանդացու դիվանում պահվող անավարտ գործերը հաստատում են նրա այս տողերը: Մ. Մինասյանի հրատարակած ցանկում կարդում ենք՝ Բառգիրք հայերէն լեզուի (223 համարի ներքո), *Dictionnaire Arménien – Français* (58, 239 համարների ներքո) խորագրերով նյութեր:

Առանձնապես հետաքրքրված է եղել նաև բուսանունների բառարանի կազմութամբ: Այս նյութի նկատմամբ իր ունեցած հետաքրքրությունն լավագույն վկայությունն անկասկած «Քննադատութիւն Հայբուսակի» ուսումնասիրությունն է, որ լույս տեսավ հետմահու, նախ՝ 1921 թվականից սկսած «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերում¹⁴, ապա 1925 թ. առանձին գրքով¹⁵: «Քննադատութիւն»-ը գրված է Մխիթարյան նշանավոր հայերից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի «Հայբուսակ» ուսումնասիրության¹⁶ առիթով: Պատահական չէր, իհարկե, Բյուզանդացու այս աշխատության հրատարակումը երկու տասնամյակ անց: Այդ մասին խմբագրականի առաջաբանում արձանագրել են նաև հրատարակիչները՝ գրելով. «Հ. Ալիշանի համբան թոյլ չէր տար առ կենդանութեան հրապարակ հանել Քննադատութիւն մը, որ նուիրուած էր անոր տարիներու աշխատութեան»¹⁷: Իժվար չէ պատկերացնել, թե Նորայրի պես զգայուն հետազոտողի վրա ինչպիսի ազդեցություն կարող էր ունենալ ահա նման մոտեցումը: Ավելին, սա միակ դեպքը չէր նրա գիտական գործունեության մեջ: Ոչ պակաս հոգեկան հարված էր նաև իր «Վենետիկ եւ Վիեննա» թեկուզև սուր, բայց շատ հետաքրքիր և ուսուցողական հոդվածի շտապագրումը «Մասիս» պարբերականի կողմից¹⁸:

Նյութականից բացի, ահա նաև այս դրդապատճառներով, դժբախտաբար, նրա մի շարք ձեռնարկումներ կյանքի չկոչվեցին: Կարելի է միայն ենթադր-

¹³ Նշվ. ֆոնդ, թղթ. 8¹⁻¹⁹⁷, նմկ 8¹⁷:

¹⁴ Հոդվածաշարը տե՛ս այստեղ՝ Հանդէս Ամսօրեայի յօդուածներու 100 տարուան մատենագիտական ցուցակ, 1887-1986, կազմեց՝ Հ. օգոստինոս վրդ. Սեֆուեան, Վիեննա, 1990, էջ 177:

¹⁵ Քննադատութիւն Հայբուսակի, գրեց Ն. Ն. Բիւզանդացի, Վիեննա, 1925:

¹⁶ Ղ. Ալիշան, Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Վենետիկ, 1895:

¹⁷ Քննադատութիւն Հայբուսակի, էջ Թ.:

¹⁸ Հոդվածը Բյուզանդացու անտիպ աշխատությունների շարքում նկատել և առաջին անգամ հրատարակել է Մ. Մինասյանը, տե՛ս Մ. Մինասեան, «Վենետիկ եւ Վիեննա (Նորայր Ն. Բիւզանդացու անտիպներից)», Միտն, 1987, 8-10, էջ 198-204, 11-12, էջ 241-247: Բյուզանդացու այս կարևոր աշխատանքը պատշաճ ծանոթագրություններով լույս է ընծայել նաև Մատենադարանի աշխատակից Գոհար Ղազարյանը, տե՛ս Գ. Ղազարյան, «Նորայր Բյուզանդացու «Վենետիկ և Վիեննա» անտիպ ուսումնասիրությունը», *ԲՄ*, 2015, 22, էջ 473-498:

րել, թե ինչպիսի կարևորություն կարող էին ունենալ այդ աշխատանքները թե՛ ժամանակի և թե՛ մեր օրերի հայագիտական մտքի համար: Այդ ձեռնարկումների շարքում էր նաև հին հայերենի բառարանի կազմումը:

Նոր հայկազյան բառարանի սրբագրումն ու հարստացումը.

Տարբեր անձանց հասցեագրված մեծաթիվ նամակներից տեղեկանում ենք, որ Ն. Բյուզանդացին մտադիր էր նաև հին հայերենի առավել ճոխ, բառերով ու վկայություններով հարուստ նոր բառարան կազմել: Այսօր հնարավոր չէ ասել, թե ինչ տեսքով է Բյուզանդացին պատկերացրել այդ բառարանի վերջնական կառուցվածքը, բաժինները, մինչև անգամ խորագիրը, սակայն նկատի ունենալով Բյուզանդացու աշխատածը, բառային պրպտումների սկզբունքներն ու բառարան կազմելու նրա մեթոդաբանությունը¹⁹ կարելի է մոտավոր կերպով գաղափար կազմել նրա այդ ծրագրի մասին: Այս հարցում անգնահատելի է Բյուզանդացու անավարտ մի գործ, որ 1990 թ. սահմանափակ տպաքանակով նմանահանությունում հրատարակել է Մ. Մինասյանը: Այդ աշխատանքը վերնագրված է այսպես՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի սրբագրուած եւ ճոխացուած նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով» (այսուհետ՝ ՆԲ. ՆՀԲ)²⁰:

Բյուզանդացու այս բառարանը կամ բառարանի նախատիպը կազմված է Մխիթարյան երեք հայրերի՝ Գ. Ավետիքյանի, Խ. Սյուրմեյանի, Մ. Ավգերյանի կազմած երկհատոր «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի (այսուհետ՝ ՆՀԲ)²¹ հիման վրա, որ «Վենետիկ և Վիեննա» վերոհիշյալ հոդվածում Բյուզանդացին անվանում է «հոյակապ գործ մը»²²: Հայտնի է, որ երկհատոր

¹⁹ Այս տեսանկյունից կարևոր է հատկապես նրա Գաղղիերէն-հայերէն բառարանը, որն իր ժամանակի համար անգերազանցելի էր: Բայց ինչպես կարելի է նկատել նրա արխիվային նյութերում, նույնիսկ այս դեպքում Բյուզանդացին շարունակել է խմբագրել և սրբագրել իր այդ հրաշալի բառարանը՝ մտադրված լինելով առաջիկայում ավելի ընդգրկուն և նոխացրած տարբերակը հրատարակել: Բառարանիս առավելությունների մասին տես՝ **Գ. Կ. Գասպարյան**, *Հայ բառարանագրության պատմություն*, Երևան, 1968, էջ 205-209:

²⁰ Բառարանի վերոհիշյալ մանրաժապավեններն այսօր պահվում են ՄՄ արխիվի Ն. Բյուզանդացու ֆոնդում հետևյալ համարների ներքո՝ Ա-Գ՝ 235³. 257^ա, Գ-Կ՝ 235³. 257^ա, Հ-Ծ՝ 235³. 257^գ, Ո-Ք՝ 235³. 257^բ:

²¹ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքաեօր **Հ. Գ. Աւետիքեան, Խ. Ս. Միսմիլեան, Կ. Մ. Աւգերեան**, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837, վերահրատ., Երևան, 1979:

²² **Գ. Ղազարյան**, *նշվ. աշխ.*, էջ 482:

այս բառարանի կազմումը տեղ է շուրջ 5 տասնամյակ²³, և պարունակում է մոտ 50.000 բառամիավոր՝ իրենց վկայություններով: Եվ չնայած այն հանգամանքին, որ բառարանի հրատարակումից հետո լույս են տեսել և շարունակում են լույս տեսնել ՆՀԲ-ում չվկայված բառերի բառարաններ ու հոդվածներ, Մխիթարյան հայրերի կազմածն այսօր էլ շարունակում է մնալ գրաբարի հիմնական և անգերազանցելի բառարանը:

Հին հայերենի իր ապագա բառարանի նյութերը, բառահոդվածներն ու զանազան բառային նշումները ն. Բյուզանդացին գետեղել է հենց ՆՀԲ-ում: Այդ նպատակով երկհատոր բառարանի յուրաքանչյուր էջին նա հավելյալ կցել է ևս մեկը՝ որպես ներդիր: Ավելացված էջերը ՆՀԲ-ի սկզբունքով բաժանել է երեք սյուների, դրանց վրա արել նշումներ, այբբենական կարգով նոր բառերի կամ բառակապակցությունների հավելումներ և այլն: Այսպես երկհատոր բառարանը վերածվել է ստվարածավալ հինգ հատորի²⁴: Առաջին հատորում ամփոփված են Ա-ով, երկրորդում՝ Բ-Ժ-ով, երրորդում՝ Ի-Հ-ով, չորրորդում՝ Ձ-Ձ-ով, հինգերորդում՝ Պ-Ֆ-ով սկզբնավորվող բառերը: Բազմաթիվ նշումներ կարելի է նկատել ոչ միայն ներդիրներին, այլև բուն բառարանի լուսանցքներին, ըստ որում՝ ոչ միայն հայերեն, այլև ֆրանսերեն, որը նրա աշխատանքային լեզուներից մեկն էր:

Բառարանն ակնհայտորեն անավարտ է. երևում է, որ մեծ բանասերը տարիներ շարունակ աշխատել և լրացրել է այն՝ հուսալով մի օր հրատարակված տեսնել տարիների իր գիտական վաստակը: Բառարանը շունի կազմողի առանձին առաջաբան, որից կարելի կլիներ պարզել դրա կազմության և բառընտրության սկզբունքները: Մի քանի նշումից բացի՝ չկա նաև գործածված աղբյուրների տեսություն կամ ընդարձակ ցանկ²⁵ իրենց հրատարակություններով, որը զգալիորեն դժվարացնում է ուսումնասիրողների աշխատանքը: Գլխաբառերը միշտ չէ, որ բացատրված են: Երբեմն պարզապես գրված է բառը, կողքին մատենագրական վկայությունը և աղբյուրի նշումը, որ հաճախ, ձե-

²³ Գ. Կ. Գասպարյան, *նշվ. աշխ.*, էջ 122: Ռ. Ղազարյան, *Նոր հայկազյան բառարանը*, 1972, էջ 23:

²⁴ Հետաճրհի է նկատել, որ ՆՀԲ-ի առաջաբանում կազմողները նույնպես նշում են, որ իրենց հավաքած բառամթերքը կարող էր ամփոփվել տպագիր հինգ կամ վեց հատորում, սակայն իրենք ստպված են եղել կրճատել բառարանը նյութական միջոցների սղության պատճառով [ՆՀԲ, 1: 6]:

²⁵ ՆՀԲ-ի աղբյուրների ցանկերում կարելի է տեսնել Բյուզանդացու ձեռնով արված մի քանի հավելում միայն, որոնք մեր նախնական տպավորությամբ ամբողջական չեն:

ուագրով կամ իր համար արված համառոտագրություններով պայմանավորված, դժվարընթեռնելի է: Ընդհանրապես, թե՛ նամակներում և թե՛ տարաբնույթ աշխատանքներում աղբյուրներ և գրականություն հղելու Բյուզանդացու ոճը միօրինակ չէ կամ ինչպես «Քննասէր»-ի վերահրատակության առիթով ճիշտ նկատել է Գ. Տեր-Վարդանյանը, այն «սևագիր-աշխատանքային» է²⁶: Բացառություն չէ նաև այս երկում գործածված գրությունը:

Քննվող բառարանի կազմության սկզբունքները հասկանալուն մեծապես նպաստում են Բյուզանդացու մի քանի հոդվածներ, որոնք նրա անտիպ գործերում նկատել և հրատարակել է Մ. Մինասյանը: Դրանցից հատկապես առանձնանում են Ստեփանոս Ասողիկի «Պատմութիւն տիեզերական» և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւնն տանն Սիսական» երկերի բառային պրպտումները²⁷: Այս հոդվածներում Բյուզանդացին իր քննած բառերը երկու խմբի է բաժանել՝ Ա. Բառք կամ վկայութիւնք արտաքոյ Նոր հայկազեան բառարանին և Բ. Բառք որք կան ի Նոր հայկազեան բառարանին (որոց վկայութիւնները չկան կամ պակասաւոր են): Փաստորեն, Բյուզանդացին կարևորել է ոչ միայն նորագյուտ բառերի, այլև արդեն հայտնի բառերի նոր վկայությունների արձանագրումը: Այս մոտեցմամբ էլ նա ջանացել է հարստացնել և առավել ճոխացնել, ըստ հարկի նաև սրբագրել ՆՀԲ-ն: Բյուզանդացու ձեռքով արված հավելումներն ու բառային աշխատանքները կարելի է խմբավորել հետևյալ հիմնական բաժինների ներքո՝

ա. ՆՀԲ-ում չարձանագրված բառերի կամ դարձվածային միավորների հավելումներ,

բ. ՆՀԲ-ում արձանագրված բառերի նոր վկայությունների կամ այդ բառերի տարիմաստ գործածությունների հավելումներ,

գ. գրաբարի բառապաշարին ոչ բնորոշ բառերի ջնջում ՆՀԲ-ից,

դ. տարաբնույթ ուղղումներ ՆՀԲ-ի բառահոդվածներում:

²⁶ Գ. Տեր-Վարդանեան, «Նորայր Բիզանդացու «Քննասէր»-ը», ՊՐՀ, 2005, 2, էջ 102:

²⁷ Ն. Բիզանդացի (հրատ. Մ. Մինասեան), «Ստեփանոս Ուպելեան. Պատմութիւն տանն Սիսական. Ա. Բառք կամ վկայութիւնք արտաքոյ Նոր հայկազեան բառարանին (Նորայր Ն. Բիզանդացու անտիպներից)», ՀԱ, 1985, 12, էջ 9-40: Ն. Բիզանդացի (հրատ. Մ. Մինասեան), «Ստեփանոս Ասողիկ. Պատմութիւն տիեզերական, [Ա.] Բառք կամ վկայութիւնք արտաքոյ Նոր հայկազեան բառարանին (Նորայր Ն. Բիզանդացու անտիպներից)», ՀԱ, 1985, 12, էջ 47-52:

Այժմ ըստ էության քննենք այս կետերը²⁸ և օրինակներով դիտարկենք Բյուզանդացու կատարած աշխատանքը:

Ա. ՆՀԲ-ում չարձանագրված բառերի, բառակապակցությունների կամ դարձվածային միավորների հավելումներ.

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տպագիր և ձեռագիր տարբեր բնագրերից Ն. Բյուզանդացին ՆՀԲ-ի իր տարբերակում հավելել է հազարավոր նորահայտ բառեր, կայուն կապակցություններ, դարձվածներ՝ մատենագրական վկայություններով: Այդ շարքում կան նաև այնպիսի բառամիավորներ, որոնք արձանագրված են եղել դեռևս 1865 թ. լույս տեսած Գր. Ճելալյանի «Առձեռն բառարան»-ում (այսուհետ՝ ԱԲ), որն ինչպես հայտնի է, շուրջ հինգ հազար բառով ավելի է ՆՀԲ-ից²⁹: Այս բառարանը նույնպես քաջածանոթ էր Բյուզանդացուն, նամակներից մեկում նա նշում է, որ իր բառարանը էականորեն պետք է տարբերվի ԱԲ-ից³⁰: 1900 թ. Կ. Բասմաջյանին հասցեագրած նամակում էլ Բյուզանդացին տեղեկացնում է, որ ինքը պատրաստել է մի ընդարձակ հոդված, որում արել է ուղղումներ Նոր հայկազյան և Առձեռն բառարաններում: Նամակում հոդվածի անունն այսպես է գրված՝ «Ուղղութիւնք Նոր հայկազեան եւ Առձեռն բառարանաց»³¹:

²⁸ Մեզ ծանոթ է Սրբունի Զորավարյանի հոդվածը, որում հեղինակը Բյուզանդացու սույն բառարանի Ա տառով սկսվող բառերի մասնակի ֆննությամբ դասակարգել է դրանք ըստ 4 խմբերի՝ նկատի ունենալով դրանցում նորագյուտ բառերի բնույթը: Տե՛ս Ս. Զորավարյան, «Գրաբար նոր բառեր հին մատենագրության մեջ ըստ Նորայր Բյուզանդացու», Լրաբեր, 1979, 9, էջ 111-117: Մեր դասակարգման և առհասարակ սույն հոդվածի նպատակը ոչ թե սուկ նորագյուտ բառերի ուսումնասիրությունն է, այլ ֆննվող բառարանի կազմության սկզբունքների և Բյուզանդացու օրինակելի աշխատանքի բացահայտումն ու արժևորումը:

²⁹ Գր. Ճելալեան, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Երկրորդ տպագրուպին, Վենետիկ, 1865, վերահրատ. Անթիլիաս, 1988: Բառարանի «Գիտելիք» բաժնում արվող տեղեկության մեջ ձեռնարկն ընդուն է, որ այն նախորդ բառարանների, այսինքն՝ ՆՀԲ-ի և 1846 թ. Մ. Ավգերյանի կազմած «Առձեռն բառարան»-ի առաջին տպագրության համեմատությամբ լրացված է հինգ հազար բառով:

³⁰ Նշվ. ֆոնդ., թղթ. 71-229, նմկ 71²¹: Ձեռնի տակ չունենալով Ն. Բյուզանդացու այդ ուղղումները կամ նշումները՝ տարակուսում եմք, թե բանասերը «Առձեռն բառարան» ասելով ո՞ր տպագրությունը նկատի ունի՝ Ավգերյան, թե՞ ձեռնարկն (տե՛ս նաև հաջորդ ծնթ.):

³¹ Նշվ. ֆոնդ., թղթ. 121-224, նմկ 121²⁴: Մ. Մինասյանի կազմած Բյուզանդացու դիվանի ցանկում այս խորագրով որևէ միավոր չգտանք: 571 համարի ներքո գրանցված է «Վրիպակ և Ազգերեան բառարանին» խորագրով 7 էջանոց մի նյութ: Հավանաբար Բյուզանդացին այստեղ նկատի ունի 1846 թ. հայր Մ. Ավգերյանի հրատարակած «Առձեռն բառարան»-ի առաջին տպագրությունը:

Ճելալյանի բառարանը, թեև ավելի հարուստ է պարունակած բառամթերքով և դրանց մի մասի թուրքերեն համարժեքներով (բառերի թուրքերեն համարժեքներ կան նաև Մ. Ավգերյանի կազմած ԱԲ-ի առաջին հրատարակության մեջ), սակայն այստեղ տրվող գլխաբառերը, նրանց իմաստային և գրչագրական տարբերակները շունեն մատենագրական վկայություններ, որի հետևանքով պարզ չեն բազմաթիվ բառերի ու բառակապակցությունների ժամանակային սահմանները: Դիտարկենք անկատարումն ածականի օրինակը: Այն արձանագրված է ոչ միայն ԱԲ-ում, այլև Ս. Գաբամաճյանի և Ստ. Մալխասյանցի բառարաններում³² առանց մատենագրական վկայության: Գործնականորեն հնարավոր չէ պարզել, թե այս բառը որ շրջանում է կիրառվել և ինչ աղբյուրում, որն այնքան կարևոր է բառի պատմության համար: Բյուզանդացու բառարանում նման բառամիավորներից շատերը լրացված են համապատասխան վկայություններով: Անկատարումն ածականի հնագույն և առայժմ միակ վկայությունը նա գտնում է Ե. դարի նշանավոր գործիչ և հայոց կաթողիկոս Հովհան Մանդակունու ճառերից մեկում (տե՛ս աղյուսակում): Այս առիթով հետաքրքիր է նկատել, որ որոշ բառեր առանց մատենագրական վկայության անցել են բառարանից բառարան, ընդհուպ մինչև ժամանակակից հայերենի, սակայն դրանց կիրառության ժամանակային սահմանների մասին տեղեկությունները բացակայում են: Օրինակ՝ բազմածիր բառը, ԱԲ-ից բացի, արձանագրված է նաև վերոհիշյալ երկու բառարաններում: Այն գտնում ենք նաև Էդ. Աղայանի կազմած «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում³³: Մինչդեռ որևէ բառարանում այս բառի գործածության օրինակ տրված չէ: Բյուզանդացու բառացանկում բազմածիր-ը գրանցված է Ժ. դարի մի հիշատակարանից՝ այսպիսով արձանագրելով տվյալ բառի ժամանակային ստորին շեմը: Բայց ինչպե՞ս համոզված լինել բառիս արդի կիրառությունների հարցում, եթե Էդ. Աղայանի բառարանում այն գրանցված է առանց վկայության, իսկ Ակադեմիայի Լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում³⁴ բառն ընդհանրապես չկա: Արևակի (Արևելահայերենի ազգային

³² Ս. Գաբամաճեան, *Նոր բառգիրք հայերէն լեզուի պատկերազարդ*, Կ. Պոլիս, 1910, էջ 98: Հայերէն բացատրական բառարան, հ. 1, կազմեց Ստ. Մալխասեանց, Երևան, 1944, էջ 130:

³³ Է. Բ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Երևան, 1976, էջ 154:

³⁴ *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 1-4, Երևան, 1969-1980:

կորպուսի) շտեմարանում մեր որոնումն ի հայտ բերեց բազմաժիր բառի միանգամից երեք վկայություն 2005 և 2007 թթ. մամուլի էջերից (չենք բացառում, որ հողվածագիրները բառը վերցրած լինեն հենց Աղայանի բառարանից)³⁵: Ահա վերոնշյալ և մի քանի այլ բառերի օրինակներ, որոնք համադրված են ԱԲ-ի տվյալների հետ.

Բառեր, որոնք կան ԱԲ-ում և Ն. Բյուզանդացու հավելումներում

ԱԲ

ՆԲ. ՆՀԲ

անկատարումն. ա. անկատար

անկատարումն – ած., թերի, անկատար. «Զի եթէ այդ միսանգամ մեզ պէտք էին յերկնից, ապա Քրիստոսի գալուստն թերի եւ անկատարումն էր» Մանդ. նորն. 205³⁶:

անկշռելություն. գ. կշռել՝ չափել չկարենալը

անկշռելություն – գ., չկարելն կշռել, չափել. «Յայսկոյս յայնկոյս բաժանեալ դիզեալ կային անբատրինմ անկշռելութեան ական տեսանելոյ» Ագթ. ձԲ. 550³⁷:

բազմախաղաց. ա. շատ ետքը գալիք ժամանակ

բազմախաղաց – [ա., հետագայ, գալիք]. «Գլխատրագոյն եւ բարձրագոյն յիշատակ արձանացուցանեմ անջինջ կտակ առ բազմախաղաց ժամանակս» Թ. Արծր. 256³⁸:

³⁵ http://eanc.net/EANC/search/?interface_language=am առ 19.11.2018 թ.:

³⁶ Տեսուն **Յովհաննու Մանդակունայ** հայոց հայրապետի ճառք, Երկրորդ տպ., Վենետիկ, 1860, էջ 205:

³⁷ **Ագաթանգեղայ Պատմություն հայոց**, աշխատությունը **Գ. Տէր-Մկրտչեան** և **Ստ. Կանայեանց**, Տիփլիս, 1909, էջ 383: Այն դեպքում, երբ Բյուզանդացու մատնանշած հրատարակությունը մեր ձեռքի տակ չի եղել, այն փոխարինել ենք մեկ ուրիշով, ինչպես այս պարագայում:

³⁸ **Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն տանն Արծրունեաց, բնագիրը պատրաստեց՝ Գ. Տէր-Վարդանեան**, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ., Ժ. դ., գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 257:

բազմածիր. ա. մեծ շրջան ընող

բազմածիր – գ. (°), [մեծ կամ ընդարձակ շրջան անող կամ բազմաշրջանակ]. «վասն զի այլայլի ի գալ արփոյն եւ բազմածիրք աստեղացն, եւ ի մանկութենէ փախստեայ ընթանայ ծերութիւն», Յիշատ. Սիմէովն վարդապետի գրեալ ի թուին Նեւ. (Քրիստոսի 999) յաւարտ մեկնութեան թղթոցն Պատղոսի յնսկերեւանէ եւ յեփրեմէ (Մատենադարան հայկական թարգմանութեան, հին, 452)³⁹:

լուսազարդափայլ. ա. լուսով զարդարուած եւ փայլած

լուսազարդափայլ – [ա., լուսազարդ, լուսափայլ]. «բարձեալ զպատուականութիւն եւ զսրբութիւն լուսազարդափայլ ծածկութեան, որ փոխանակ դրախտին շնորհեցաւ մեզ ի կենաց փայտէ խաչին Քրիստոսի» Վկ. Վահ. Գողթ., Սոփ. ԺԳ. 13⁴⁰:

ծառայորդի. ա. ծառայի զաւակ

ծառայորդի – [ա. ծառայի որդի]. «Դոմ էք ազատորդիք վերին ազատութեան, զոր կամեցան հնազանդել ծառայորդիք ներքին ծառայութեանն» ի Վկ. արեւ., Սոփ. Ի. 108⁴¹:

³⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 73:

⁴⁰ Ողբք վասն շարեացն աշխարհիս Հայոց եւ վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացոյ, Սոփերք հայկական, ԺԳ., Վենետիկ, 1854, էջ 13:

⁴¹ Պատմութիւն վարուց սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի եւ ճառ ի վկայսն արեւելից, Սոփերք հայկական, Ի., Վենետիկ, 1854, էջ 108:

Ներդիր թերթերին արված Բյուզանդացու հավելումների մեջ մեծ թիվ են կազմում նաև նորագյուտ բառերը՝ այն բառերը, բառատարբերակներն ու կապակցությունները, որոնք արձանագրված չեն ոչ միայն ՆՀԲ-ում, այլև տպագիր մյուս բառարաններում: Ահա մի քանի օրինակ՝

աշխարհադիր	գաղտագնացութիւն	դեսպանապետ
աշխարհամուլար	գաղտախած	ելելչ առնել
բազմօգտութիւն	գանձմտութիւն	երագադարձ
բամբասանս ածել	դալարածին	երկայնամտագոյն
բանից ընկեր	դիւաւեր	երկայնատեսակ

Անավարտ և անտիպ լինելով՝ Բյուզանդացու այս բառացանկն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Այն էպես կարող է նպաստել գրաբարի նոր բառարանների կազմությանը՝ հարստացնելով դրանք հայ բառարանագրությանն անհայտ բառամթերքով: Այդպիսի մի օրինակ է Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան»-ը (այսուհետ՝ ԼՀ.ԳԲ), որի աղբյուրների ցանկում հիշատակված է Բյուզանդացու քննվող բառարանը⁴², և բազմաթիվ բառերի դիմաց առկա է «/Ն. Բիւզ./» նշումը, ինչպես օրինակ՝ դատարկախօս [ԼՀ.ԳԲ: 93], երկնակէտ [ԼՀ.ԳԲ: 108], զագրաշահութիւն [ԼՀ.ԳԲ: 110], զբաղապէս [ԼՀ.ԳԲ: 111], զուարճախիտ [ԼՀ.ԳԲ: 113] և այլն:

Բ. ՆՀԲ-ում արձանագրված բառերի նոր վկայությունների հավելումներ.

Հմուտ բառագետի ուշադրությունից չեն վրիպել նաև այն բառերն ու տարաբնույթ կապակցությունները, որոնք ՆՀԲ-ին հիմնականում հայտնի են մատենագրական եզակի վկայություններով: Իր լրացումների և ճշտումների շնորհիվ Բյուզանդացին հարստացրել, ընդարձակել է այդօրինակ բառերի

⁴² Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010, էջ 12:

տվյալները: Ըստ որում՝ շատ հաճախ այդ նոր կիրառությունների գրանցումներով փոխվել են նաև բառերի ժամանակային սահմանները: Գիտարկենք մի քանի օրինակ՝

Ահեղագոչ ածականը նշՔ-ին հայտնի է միայն Շարակնոցից, հանդիպադիր ներդիրին Բյուզանդացին հավելել է բառիս մեկ այլ վկայություն Գր. Նարեկացու «Յարութեան» տաղից. «Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ, / Ուռամիջակ, հաստաբազուկ, / Կայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ»⁴³ [ՆՔ. նշՔ, 1: 30բ]:

Երկմտեցուցանեմ պատճառական բայը նշՔ-ում արձանագրված է միայն ժ. դարի հայոց կաթողիկոս Հովհաննես Գրասխանակերտցու «Պատմություն»-ից [նշՔ, 1: 695], սակայն Ն. Բյուզանդացու նոր հավելումը քաղված է Ագաթանգեղոսի «Պատմություն»-ից, որով բառիս կիրառությունը հաստատվում է դեռևս Ն. դարում: Ահա մեջբերվող հատվածը՝ «եւ ոչ նեղութիւնք բազումք երկմտեցուցին զմի ոք ի նոցանէ»⁴⁴ [ՆՔ. նշՔ, 2: 538ա]:

Գեղեցկանունն բառը «Որոյ անունն է գեղեցիկ եւ խորհրդաւոր, կամ բարեհամբաւ» բացատրությամբ նշՔ-ին դարձյալ մեկ վկայությամբ հայտնի է Ն. Շնորհալու «Ողբ Եգեսիոյ» պոեմից [նշՔ, 1: 538]: Ն. Բյուզանդացին գտնում է նույն բառի մեկ այլ կիրառություն Ն. դարի հայ թարգմանական մատենագրության հուշարձաններից մեկում՝ Ելթաղի «Յառաջաբան գրոցս Գործոց առաքելոց» երկի հայերեն թարգմանության մեջ. «Իսկ ես արդարագոյն եւ առաւել ուղղագոյն զսննդակիցն եւ զբարեկամ նշանակեցից եւ մանր պատմեցից զգեղեցկանունն, զհոչակաւորանունն, զանուանակիրն աստուածեղէն պատգամացն»⁴⁵ [ՆՔ. նշՔ, 2: 695բ]:

Նորահայտ այս վկայությունները երբեմն հանդես են բերում բովանդակային տարբերություններ՝ ընդարձակելով գլխաբառերի իմաստային դաշտը: Գիտողական բառը, օրինակ, նշՔ-ում բացատրված է այսպես. «Ճանաչողական, զգացող, ըմբռնող, նաև՝ կարողութիւն գիտելոյ, զօրութիւն ճանաչողական» [նշՔ, 1: 557]: Ագաթանգեղոսից քաղած օրինակով Բյուզանդացին մատնանշում է բառիս մեկ այլ նշանակություն՝ «մարգարէական»: Ահա իր

⁴³ Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 63:

⁴⁴ Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, էջ 120:

⁴⁵ Մատենագրութիւնք Ելթաղի. քննութիւն եւ բնագիր, յաւելուած Եւսեբեայ Կեսարացւոյ Թուղթ առ Կարպիանոս, հրատարակեց Հ. Ա. Վարդանեան, Վիեննա, 1930, էջ 164:

նշած հատվածը. «Իսկ զանպիտոյսն այրեսցէ, որպէս ըստ գիտողական բանին ասէ. «Եղիցի լոյսն Իսրայելի հուր, եւ սրբեսցէ զնա ի բոց բորբոքեալ» (Ես. Ժ: 17)»⁴⁶ [ՆԲ. ՆՀԲ, 2: 557բ]:

Հավելումներում հաճախադեպ են նաև ՆՀԲ-ում արձանագրված բառերի խոսքիմասային նոր կիրառությունները: Անխառնակ «ոչ խառնակեալ, անշփոթ կամ անժուժկալ, անարգել» բառը ՆՀԲ-ում գրանցված է որպես ածական [ՆՀԲ, 1: 159]: Բյուզանդացին վկայակոչում է նույն բառի մակբայական գործածությունը՝ էջի ստորին հատվածում գրելով. «Անխառնակ. մ. առանց խառնակելոյ (ընդ կնոջ)» [ՆԲ. ՆՀԲ, 1: 159], ապա նշում օրինակը. «Եւ զայս առնէր Շապուհ՝ զի զկանայս նորա արձակեաց առ նա (Մուշեղ - Ն. Բ.) անխառնակ եւ անգին»⁴⁷:

Հարյուրավոր բառերի նորահայտ վկայությունների, իմաստային և խոսքիմասային փոփոխությունների գրանցումները բառարաններում էական նշանակություն ունեն պատմական բառագիտության համար, և այս բնույթի աշխատանքն ավելի է մեծացնում Բյուզանդացու խմբագրության արժեքը:

Գ. Գրաբարի բառապաշարին ոչ բնորոշ բառերի ջնջում ՆՀԲ-ից.

Լեզվի պատմական որևէ ընթացք արտացոլող բառարանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն այդ լեզվի զարգացման շրջանաբաժանումը, ժամանակագրական տարբեր փուլերում հորինված սկզբնաղբյուրների ընտրանքը, դրանց բնույթը, լեզուն և ոճը: Բացառություն չէ ՆՀԲ-ն, որի ընդարձակ առաջաբանում բառարանագիրները մանրամասն ծանոթացնում են տպագիր և անտիպ իրենց սկզբնաղբյուրներին: Դրանցում ներառված են Ե-ժէ. դարերում ստեղծված հայ ինքնուրույն և թարգմանական մատենագրության ամենատարբեր ոլորտներն ընդգրկող երկեր [ՆՀԲ, 1: 9-20]: Հետգրաբարյան շրջանում ստեղծված երկերի դեպքում հիմնական շեշտադրումն, իհարկե, ուղղված է հին հայերենով գրված մատենագրությանը: Խոսելով ՆՀԲ-ի ԺԴ-ժէ. դդ. աղբյուրների մասին՝ Ռ. Ղազարյանն ընդգծում է, որ նշյալ շրջանի երկերը «բառարանը (իմա՝ ՆՀԲ) կազմողներին հետաքրքրել են այնքանով, որքանով որ գրված են հին հայերենով»⁴⁸:

⁴⁶ Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, էջ 297:

⁴⁷ Պատմութիւն սրբոյն ներսիսի Պարթեւի հայոց հայրապետի, Սուփերֆ հայկական, Զ., Վենետիկ, 1853, էջ 70:

⁴⁸ Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 31:

Ն. Բյուզանդացին իր խմբագրության մեջ զանց չի առել նաև ՆՀԲ-ի աղբյուրների քննությունը, դրանցում հավելել է նորերը կամ ջնջել ցանկում նշված առանձին աշխատություններ, լուսանցքներում արել է նշումներ և լրացումներ: Ըստ որում՝ նրա հավելումների մեջ նույնպես կան ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ գործեր, ձեռագրեր, որոնցից նա օգտվել է Վենետիկում, Փարիզում, Պոլսում, ինչպես գրում է իր նամակներում:

Բուն բառարանի էջերին կարելի է նկատել բազմաթիվ դեպքեր, երբ Բյուզանդացին պարզապես գիծ է քաշել գլխաբառի կամ նրա մի վկայության վրա: Իր խմբագրության առաջին երկու հատորներում մեր հաշվումներով նա այդ կերպով ջնջել է ավելի քան 500 ամբողջական բառահոդված: Ներքոբերյալ ցանկում նշենք ջնջված գլխաբառերի մի քանի օրինակ՝

ագետակ	բաբանաբար	դառնահառաչ
ագապ / ագապութիւն	բազկանոց	դարբնաբար
ագատագարմ	բազմախահ	երկնագէն
ագատադաց	գայլապատառ	զինահար
ագդողաբար	գեղջկապէս	գրահագործ

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ջնջվել են այնպիսի բառեր, որոնք անվավեր կամ գրավոր աղբյուրներում գրչական սխալներով պայմանավորված տարրնթերցումների հետևանք են: Այս ենթադրության համար բավարար հիմք է տալիս Բյուզանդացու «Նախնիք»-ը, ուր հարյուրավոր նման դեպքերի արձանագրումներ ենք գտնում: Առաջաբանի և Բյուզանդացու անմիջական բացատրության բացակայության պարագայում հարկ եղավ առանձնացնել ջնջված բառերը և ստուգել դրանք: Արդյունքում պարզ դարձավ, որ այդ բառերի զգալի մասի աղբյուրները համընկնում են. դրանք միջնադարյան բժշկարաններից, ախտարքներից, ձեռագիր հիշատակարաններից, գանձարաններից, տաղերից, առակներից, Ոսկեփորիկ ժողովածուից և նման աղբյուրներից քաղված բառեր և բառակապակցություններ են, որոնք մեծ աղբյուրագետի կարծիքով, չեն կարող տեղ գտնել գրաբարի այնպիսի բառարանում, ինչպիսին ՆՀԲ-ն

է⁴⁹: Միջնադարյան գրավոր այս հուշարձաններում վկայված, սակայն ՆՀԲ-ից անջատված բառերի հիմնական մասը, ըստ Բյուզանդացու, պատկանում են հայերենի միջինհայերենյան (իր բնորոշմամբ՝ ստորին հայերեն) բառաշերտին, և ըստ այդմ՝ պետք է տեղ գտնեն նշյալ շրջանի բառամթերքն արտացոլող բառարանում: Այդպիսի բառարանի կազմության մտադրության մասին նա քանիցս հայտնել է տարբեր անձանց հասցեագրած իր նամակներում, սակայն բազմաթիվ այլ գործերի հետ այս նախաձեռնությունը ևս անավարտ է մնացել: Բարեբախտաբար, նրա դիվանում պահվող նյութերի հիման վրա 2000 թ. Մ. Մինասյանն իրականացրեց շնորհակալ մի գործ ևս՝ տպագրելով ն. Բյուզանդացու թեկուզ անավարտ, բայց արժեքավոր այդ հետազոտությունը՝ «Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ-ժԷ. դարուց» խորագրով⁵⁰ (այսուհետ՝ ԲՄՀ): Եվ ահա, ՆՀԲ-ից ջնջված բառերի մեծ մասը գտնում ենք Բյուզանդացու այս բառարանում՝ լրացված և հարստացված նորանոր կիրառություններով: Այսպես, վերը նշված ագետակ բառը ՆՀԲ-ի մեկ հիշատակության դիմաց այստեղ արձանագրված է երեք վկայություններով [ԲՄՀ: 8]: Առանձին ներկայացված են ազապ և ազապութիւն բառահոդվածները՝ իրենց համապատասխան վկայություններով [ԲՄՀ: 9-10]: Նույն կերպ, Ստ. Օրբելյանի «Պատմության» մեջ վկայված ազատագարմ բառը ՆՀԲ-ից ջնջված և տեղափոխված է «Ստորին հայերենի բառարան» [ԲՄՀ: 10]: Այդպես է և մյուս բառահոդվածների դեպքում: Ի լրումն նշենք, որ այս բառերի մի մասն ամփոփված է նաև հետագայում Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի կազմած «Միջին հայերենի բառարան»-ում, ինչպես՝ ագետակ [ՄՀԲ: 13], ազապ, ազապութիւն [ՄՀԲ: 15], ազատաղաց [ն.տ.], ազդողաբար [ՄՀԲ: 15] և այլն:

Այս առիթով նկատենք, որ աղբյուրների տարանջատումը, դրանց բառապաշարի դասակարգումը բառարանագրության կարևոր հարցերից մեկն է, որն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Մասնավորապես, քիչ չեն այնպիսի բառահոդվածները, որոնք, օրինակ, միևնույն սկզբնաղբյուրի վկայակոչումով միաժամանակ արձանագրված են հայերենի տարբեր շրջափուլերի բառա-

⁴⁹ Արդարև, ՆՀԲ-ն նման բառերի կողքին շատ հաճախ դնում է ոմկ. (= ումկական) նշումը կամ պարզապես գրում է «ումկական բառ յետին դարուց», հմմտ. ազապ և ազապութիւն բառերը [ՆՀԲ, 1: 4]:

⁵⁰ Ն. Բիւզանդացի, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ-ժԷ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը, ժնեւ, 2000:

րաններում, այդ թվում՝ ՆՀԲ-ում, ՄՀԲ-ում կամ ԲՍՀ-ում: Օրինակներով դիտարկենք ասվածը. քաջուորակ բառը, որը դեռևս Թրակացու «Քերականութեան» մեջ վկայված քաջուորակի բառի⁵¹ տարբերակ է՝ բառավերջի ի-ի անկմամբ, Ստ. Օրբելյանի «Պատմություն»-ից գրանցված է ՆՀԲ-ում, ՄՀԲ-ում և ԲՍՀ-ում: Հստ այսմ՝ քաջուորակ բառը գրաբա՞ր, թե՞ միջին հայերեն բառ է: Առանց մատենագրական վկայությունների այն կա նաև ԱԲ-ում, ՀԲԲ-ում և այլ բառարաններում: Նույն կերպ թագաւորորդի և գծողակ բառերն արձանագրված են հայերենի հետևյալ բառարաններում՝

	ԱԲ: 316	ԱԲ: 219
	ՍԳ.ՆՀԲ: 503	ՍԳ.ՆՀԲ: 331
	ՀԲԲ, 2: 73	ՀԲԲ, 1: 450
ԹԱԳԱՒՈՐՈՐԴԻ	ԲՍՀ: 215	ԲՍՀ: 142
	ՄՀԲ: 229	ՄՀԲ: 144
	ԼՀ.ԳԲ: 119	ԼՀ.ԳԲ: 86
	ԺՀԼԲԲ, 2: 121	
	ԱՀԲԲ, 1: 411	
	ԳԾՈՂԱԿ	

Այս դեպքում էլ ակներև է նույն խնդիրը, հատկապես, երբ բառարաններում աղբյուրները համընկնում են:

Գ. Տարաբնույթ ուղղումներ ՆՀԲ-ի բառահոդվածներում.

Ն. Բյուզանդացու քննվող խմբագրություն մեջ մեծ թիվ են կազմում նաև ՆՀԲ-ի տարբեր բառահոդվածներում արված ուղղումները, որոնից շատերը իմաստային և քերականական բնույթ ունեն: Այսպես, ՆՀԲ-ում արձանագրված բորենի գլխաբառի վրա Բյուզանդացին գիծ է քաշել և հաջորդ թերթին գրել.

⁵¹ Արուեստ Գրոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին (Դաւթի փիլիսոփայի, Անանուն Մեկնչի, Մովսեսի Քերդողի, Ստեփանոսի Ուլնեցոյ, Համամի Արեւելցոյ եւ Գրիգորի Մագիստրոսի), Ն. Աղոնց, Երկեր, հ. Գ, Հայերենագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2008, էջ 2:

«Սխալ է Բորենի, բենույ, որպէս նանի, ւոյ. ուղղականն է Բորեան, բենոյ (հմմտ. ցորեան > ցորենոյ – Խ. Հ.)»: Այս ճշտմանը հաջորդում են համապատասխան օրինակներ, որոնցով Բյուզանդացին ամրապնդում է իր դիտարկումը [ՆԲ. ՆՀԲ, 2: 508բ]: Նույն ձևով ՆՀԲ-ում գրանցված դենիմագղէն բառը բանասերն ուղղում է դենիմագղեզ ձևով և նշում նաև բառիս մատենագրական վկայությունը [ՆԲ. ՆՀԲ, 2: 610բ]: Դառն ածականի հոլովման հարացույցին վերաբերող նշումներում ՆՀԲ-ն տրամադրում է «դառին, դառանց և դառինց» ձևերը [ՆՀԲ, 1: 596], Բյուզանդացին դրանց է հավելում հոգնակի ուղղականի դառունք և գործիականի դառնիք զուգահեռ ձևերը՝ համապատասխան վկայություններով [ՆԲ. ՆՀԲ, 2: 596բ]: Առիժ բառի՝ ՆՀԲ-ի քերականական նշումներին հավելում է հետևյալ տեղեկությունը. «Առիժ. բացու.[ական] գտանի եւ յառիժուէ» [ՆԲ. ՆՀԲ, 1: 305բ]:

Բառագետի ուշադրությունից չեն վրիպել նաև բառիմաստները, և մի շարք դեպքերում կարելի է տեսնել նաև այստեսակ ճշտումներ և հավելումներ: Այսպես, գանձակալ բառը ՆՀԲ-ն բացատրում է իբրև գանձապահ՝ հղում անելով վերջինին [ՆՀԲ, 1: 529] և վկայակոչելով Հովհաննես Սարկավագի աղթքի հետևյալ հատվածը՝ «քանզի ամենափարթամ եւ առատապարգեւ թագաւորի՝ անթերի ի յորդառատութեանն զգանձակալ մթերայնոցն ունողի ոչ վայելուչ է ճշդաշափութիւն»⁵²: Քննելով ՆՀԲ-ի վկայակոչած աղբյուրը՝ Բյուզանդացին գրում է. «Այս գանձակալ ոչ է գանձապահ, այլ որ ունի կամ բովանդակէ յինքեան գանձ, եւ «գանձակալ մթերայնոց» նշանակէ պարզապէս «մթերանոց գանձու, գանձարան»» [ՆԲ. ՆՀԲ, 2: 529բ]: Դեղահունդ գոյականը ՆՀԲ-ն այսպես է մեկնում. «Ունդ կամ սերմն՝ որ ի դեղ դալարի» [ՆՀԲ, 1: 608]: Բյուզանդացին ջնջում է այս բացատրությունը և հանդիպակաց ներդիրին գրում. «Դեղահունդ. չոր պտուղք ուտելիք կամ ընդեղէնք» [ՆԲ. ՆՀԲ, 2: 608բ]:

Ամփոփում

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր բառարանը Մխիթարյան հայրերի անգնահատելի ներդրումն է հայոց լեզվի պատմության ուսումնասի-

⁵² Աղօթամատոց Յովհաննու Սարկաւագայ վարդապետի, Սոփեոբ հայկականք, ԺԷ., Վենետիկ, 1854, էջ 40:

րուծյան գործում: Այն եղել և շարունակում է մնալ մեր նախնյաց մատենագրության մեջ ավանդված բառամիջերքի անգերագանցելի շտեմարանը, որը դեռ շատ երկար պետք է ծառայի գիտական հանրությանը: Մյուս կողմից, Ն. Բյուզանդացու նման խոշոր աղբյուրագետի և բառագետի հավելումները, ճշտումներն ու սրբագրումները, նրա մեղվաջան աշխատանքն ու ուրույն մեթոդաբանությունը նույնպես մեծարժեք են բանասերների ներկա և հետագա սերունդների համար: Ուսումնասիրելով Բյուզանդացու այս խմբագրությունը՝ համոզվեցինք, որ այստեղ ամբարված բառագիտական աշխատանքն արժանի է առանձին և ավելի խորը ուսումնասիրության, իսկ սկզբնաղբյուրների և դրանցից քաղված բառերի և բառակապակցությունների վերհանումը կարող է նպաստել հայ բառարանագրության հետագա ընթացքին՝ հարուստ նյութ ապահովելով գրաբարի կամ միջին հայերենի նոր բառարանների կազմությանը:

Նկատի ունենալով հիշյալ հանգամանքը՝ նախաձեռնել ենք Ն. Բյուզանդացու մեծարժեք այս աշխատության ուսումնասիրությունը՝ առաջիկայում նպատակ ունենալով ամփոփ հրատարակության պատրաստել մեծ բանասերի բառային պրպտումների այս արգասիքը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒՄՆԵՐ

- Ա.Հ.ԲԲ** – **Է. Բ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976:
- Ա.Բ** – **Գր. Ճեյալեան**, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Երկրորդ տպագրություն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1865, վերահրատ. Անթիլիաս, 1988:
- ԲՄՀ** – **Ն. Բիւզանդացի**, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ-ժԷ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը, Ժնև, 2000:
- ԺՀԼԲԲ** – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1969-1980:
- ԼՀ.ԳԲ** – **Լ. Շ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:

- ՀԲԲ** – Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, կազմեց Ստ. Մալխասեանց, Երևան, 1944-1945:
- ՄՀԲ** – Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, երկրորդ բարեփոխված հրատ., Երևան, 2009:
- ՆՀԲ** – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւն երկից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ. Գ. Աւետիքեան, հ. Խ. Սիրմէլեան, հ. Մ. Աւգերեան, հ. 1-2, Վեներտիկ, 1836-1837, վերահրատ. Երևան, 1979:
- ՆԲ. ՆՀԲ** – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, սրբագրուած եւ ճոխացուած նորայր Ն. Բիւզանդացու ձեռքով, հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը, հ. 1-5, Ժնէւ, 1990:
- ՍԳ.ՆՀԲ** – Ս. Գաբամանեան, Նոր բառգիրք հայերէն լեզուի պատեկարագարդ, տպ. Ռ. Սարգսեան, Կ. Պոլիս, 1910:

KHACHIK HARUTYUNYAN

**NORAYR BYUZANDATS‘I’S REVISED VERSION OF
THE NOR HAYKAZYAN BARARAN (NEW DICTIONARY OF ARMENIAN)**

Keywords: History of the Armenian language, historical lexicology, Classical Armenian, Middle Armenian, Modern Armenian.

Norayr Byuzandats‘i was one of the famous Armenian philologists and lexicographers of the late 19th and early 20th centuries, a member of the Mekhitharist Congregation in Venice, keeper of the congregation library, editor of the scholarly journal *Bazmavēp*, and lecturer at the Moorad Raphael College in Venice. Byuzandats‘i’s contribution is particularly significant in Armenian lexicology and lexicography. Unfortunately, his academic legacy still remains insufficiently studied and underappreciated. During his lifetime, he was able to publish only few works, and many of his studies remain unpublished.

In the 1990s, thanks to Martiros Minasian’s efforts, some of Byuzandats‘i’s studies became accessible to researchers. The phototype edition of the revised version of the famous Nor Haykazyan Bararan (originally published by the Mechi-

tarists in 1836 [vol. 1] and 1837 [vol. 2] in Venice) is among those works. It is incomplete; he worked on the dictionary for years, added and corrected thousands of words but, unfortunately, did not finish it. The incomplete version of the dictionary consists of five volumes.

Byuzandats'i's corrections, additions, and various notes in the Nor Haykazyan Bararan can be grouped as follows:

- a. addition of words and phrases not included in the dictionary;
- b. addition of new examples for the words and phrases included in the dictionary;
- c. deletion of words and phrases untypical of Classical Armenian;
- d. various notes and corrections in the dictionary.

ХАЧИК АРУТЮНЯН

**ОТРЕДАКТИРОВАННАЯ ВЕРСИЯ “NOR HAYKAZYAN BARARAN”-А
(НОВОГО СЛОВАРЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА)
НОРАЙРА БЮЗАНДАЦИ**

Ключевые слова: История армянского языка, словарь, историческая лексикология, древнеармянский, среднеармянский, современный армянский.

Норайр Бюзандаци – один из известных деятелей армянской филологии и лексикографии конца XIX и начала XX веков, член конгрегации Мхитаристов Венеции, хранитель библиотеки конгрегации, ответственный редактор научного журнала “Vaznavēr”, и, наконец, преподаватель в колледже Мурада Рафаэля в Венеции.

Вклад Н. Бюзандаци особенно важен в области армянской лексикологии и лексикографии. К сожалению, его научное наследие по сей день остается мало изученным и не оцененным. За свою жизнь он смог опубликовать очень мало работ, и многие его исследования остались неопубликованными. В 1990-е годы усилиями Мартироса Минасяна часть исследований Бюзандаци была опубликована. Среди них была фототипическое издание отредактированной версии знаменитого “Nor Haykazyan Bararan”-а (Нового словаря

[древне]армянского языка), изданного мхитаристами в 1836 (том 1) и 1837 (том 2) в Венеции. Работа Бюзандаци является незавершенной; он годами работал над словарем, добавлял и исправлял тысячи слов, но, к сожалению, не успел его закончить. Неполная версия словаря состоит из 5 томов. Правки, дополнения и различные заметки Бюзандаци в “Nor Haykazyan Baġaran”-е можно разделить на следующие категории:

- а. дополнения слов и словосочетаний, не включенных в словарь;
- б. добавления новых примеров слов и фразеологизмов, засвидетельствованных в словаре;
- в. удаление слов, словосочетаний и выражений, не характерных для древнеармянского языка;
- г. различные заметки и исправления в словаре.